ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/37397-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-057-04.10.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1206 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-057-04.10.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 130-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, համաձայն որի՝ վարչական մարմինները տուգանքների վերաբերյալ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն բացառապես այն դեպքերում, երբ տուգանքի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը:

Միաժամանակ առաջարկվում է օրենսգրքի 154-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով, որի արդյունքում՝ վարչական մարմինների՝ վճռաբեկ բողոք բերելու դեպքերի վրա տարածվում են սույն օրենսգրքի 130-րդ հոդածի 3-րդ մասով սահմանված կանոնները:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է իր դիտարկումները:

1. Նախևառաջ հարկ ենք համարում անդրադառնալ նախագծի հիմնավորման մեջ նշված՝ նախագծով ակնկալվող արդյունքին: Այսպես՝ ըստ նախագծի հիմնավորման՝ դրա ընդունման դեպքում էապես կբեռնաթափվեն ՀՀ վերաքննիչ վարչական և վճռաբեկ դատարանները, քանի որ վարչական մարմինները մեխանիկորեն ներկայացնում են վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, որի պարագայում առաջանում է ուշացած արդարադատության ծայրահեղ վտանգավոր իրավիճակ և ողջամիտ ժամկետներում գործերի քննության երաշխիքի խախտում:

Վերոնշյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ վարչական մարմիններին նման էական կարևորության իրավունքից զրկումը կամ դրամային շեմով սահմանափակումը որևէ իրավական տրամաբանությամբ չի կարող հիմքում ունենալ այնպիսի տեխնիկական հիմնավորում, ինչպիսին դատարանների բեռնաթափումն է:

Հարկ է նշել, որ բազմաթիվ են սահմանադրական դատարանի որոշումները՝ ուղղված եռաստիճան դատական համակարգի երաշխավորման հրամայականի կենսագործմանը: Սակայն նման կարգավորման ընդունման պարագայում մեծաթիվ գործերով կբախվենք ոչ թե երկաստիճան, այլ միաստիճան դատական համակարգի առկայության փաստին, որը միանշանակորեն կհանգեցնի խնդիրների նաև ՀՀ միջազգային պարտավորությունների իրականացման տեսանկյունից:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով նաև նախատեսվող սահմանափակման տրամաբանությանը՝ հարկ է ընդգծել, որ փաթեթով ներկայացված չէ որևէ տնտեսագիտական հիմնավորում առ այն, թե ինչու է սահմանափակման հիմքում դրվել հենց նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի գաղափարը, որևէ վերլուծություն կամ վիճակագրություն առկա չէ նշված չափի տուգանքներով պայմանավորված դատական գործերի քանակի, դրանց բացակայության հետևանքով քննարկվող դատարանների բեռնվածության նվազեցման տոկոսային հարաբերակցության վերաբերյալ:

Միաժամանակ հարկ է անդրադառնալ նաև նախագծով առաջարկվող կարգավորման ձևակերպմանն այն տեսանկյունից, որ առկա առաջարկով, փաստորեն, վարչական մարմինները հնարավորություն կստանան իրացնել իրենց բողոքարկման դատավարական իրավունքը միայն այն դեպքերում, երբ տուգանքի չափը չի գերազանցի 500.000 դրամը: Կարծում ենք՝ նախագծի հեղինակը նկատի է ունեցել տրամագծորեն հակառակ կարգավորում, սակայն տրված ձևակերպմամբ կարգավորման նպատակը հանգել է այլ բովանդակության:

Բացի դրանից, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Լ որոշմամբ հաստատված դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ որպես ռազմավարական ուղղություններ որդեգրվել են դատարանների ծանրաբեռնվածության նվազեցումը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովումը: Մասնավորապես՝ փաստելով, որ դատարանների գերբեռնվածությունը խոչընդոտում է դատական գործերի արագ և արդյունավետ քննությանը՝ հանգեցնելով անձի արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումների:

Այս համատեքստում խնդիրը լուծելու համար նախատեսվում է ավելացնել դատավորների և դատավորի օգնականների թիվը, ներդնել վեճի լուծման այլընտրանքային արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ էլեկտրոնային գործիքներ, ինչպես նաև ներդնել և ակտիվորեն օգտագործել էլեկտրոնային կառավարման համակարգերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերը՝ կարծում ենք, քննարկվող նպատակին հասնելու համար հատվածային կամ միջանկյալ լուծումները հիմնավորված չեն և, ըստ էության, չեն հանգեցնելու խնդրի համակարգային կարգավորման:

2. Բովանդակային առումով՝

1) առաջարկվող կարգավորումը վիճելի է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի համատեքստում, մասնավորապես՝ նախագծով նախատեսված դեպքերում վարչական մարմնի բողոքարկման իրավունքի սահմանափակումը խաթարում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես դատական իշխանության բարձրագույն մարմնի՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառույթի իրականացումը: Արդյունքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ նախագծով նախատեսված գործերով վարչական դատարանների կողմից ձևավորվի ոչ միատեսակ կամ սխալ դատական պրակտիկա, իսկ Վճռաբեկ դատարանն իրավականորեն զրկված լինի իր սահմանադրաիրավական առաքելությունն իրականացնելու հնարավորությունից: Ուստի գտնում ենք, որ եթե նույնիսկ ընդունելի համարվի վարչական մարմինների բողոքարկման իրավունքի սահմանափակումը, տուգանքի չափը չի կարող համարվել նման սահմանափակման չափանիշ, քանի որ տուգանքի չափով հնարավոր չէ հասկանալ այս կամ այն հարաբերությունների կարևորության աստիճանը: Մինչդեռ այդ կարևորությունը արժևորվում է այնքանով, որ տվյալ հարաբերություններում կարող է ինչ-որ մի պահ

առաջանալ դատական պրակտիկայի միասնականության, նորմի ճիշտ կիրառումն ապահովելու խնդիր: Ստացվում է, որ զուտ տուգանքի չափի պատճառով դատական պրակտիկան չի կարողանալու նպաստել կարևոր վարչաիրավական հարաբերությունների զարգացումը: Ավելին, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանով վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքի չափերը հիմնականում չեն գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը.

2) օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ կողմերն իրավունք ունեն սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը: Նշված դրույթից բխում է, որ դատավարության կողմերն օժտված են հավասար դատավարական իրավունքներով և պարտականություններով, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքով, հետևաբար նախագծով առաջարկվող կարգավորումը կհանգեցնի վարչական դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտման.

3) հարկ է նկատի ունենալ, որ առաջարկվող կարգավորումից պարզ չէ՝ ինչ է իրենից ենթադրում տուգանքների վերաբերյալ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը: Օրենսգրքի 66-69-րդ հոդվածներով սահմանված են այն հայցատեսակները, որոնցով հնարավոր է դիմել ՀՀ վարչական դատարան, մինչդեռ «տուգանքների վերաբերյալ գործեր» ձևակերպումից պարզ չէ, թե ինչ հայցատեսակով գործերին է կարգավորումը վերաբերում՝ նկատի ունենալով, որ տուգանքներին առնչվող գործեր կարող են լինել, օրինակ՝ վիճարկման հայցով, երբ ներկայացվել է վարչական մարմնի ակտով նշանակված տուգանքի վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու մասին պահանջ, կամ, օրինակ՝ գործողության կատարման հայց, երբ ներկայացվել է վարչական մարմնի կողմից նշանակված տուգանքի գումարի բռնագանձման պահանջ: Այլ կերպ ասած՝ վարչական մարմինների բողոքարկման իրավունքի սահմանափակումը կիրառելու համար դատական ակտերի տեսակավորումն անհրաժեշտ է իրականացնել ոչ թե վեճի առարկա վարչական ակտով կիրառված տուգանքի չափի, այլ վարչական գործի փաստական հանգամանքների (օրինակ՝ զանցակազմերի օբյեկտների) հիման վրա.

4) հարկ ենք համարում նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը, նշել է. «....Վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցագնի չափով պայմանավորված՝ վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարվում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը:

....Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով, օրենսդիրը սահմանելով դրանում նշված գործերով վերաքննության իրավունքի սահմանափակում, շեղվել է օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման բացառություններ սահմանելու անհրաժեշտությունը բխում է 1995 թ.

փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածի b) կետի պահանջներից, որի համաձայն՝ բացառությունները դատական վերահսկողության իրավունքից թույլատրելի են միայն այն պայմանով, որ համապատասխանեն արդարության ընդհանուր սկզբունքներին»: Սրանով պայմանավորված՝ գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքում այլևս հայցագնի չափով պայմանավորված բողոքարկման իրավունքի սահմանափակում նախատեսված չէ: Թեև ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշումը վերաբերում է անձանց բողոքարկման իրավունքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակմանը, գտնում ենք, որ դրանով նախատեսված իրավական դիրքորոշումները պետք է հաշվի առնվեն նաև վարչական գործերով վարչական մարմինների բողոքարկման իրավունքի սահմանափակման համատեքստում:

Մյուս կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է դատական ակտերի անվերապահ բեկանման հիմքերը:

Առաջարկվող փոփոխությունների արդյունքում նախագծի հեղինակը, նախատեսելով վերաքննության իրավունքի սահմանափակում, փաստորեն շեղվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ վարչական դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Պետք է նկատի ունենալ նաև, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Եվրոպական կոնվենցիան պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածի երաշխիքներից: Այսպիսով՝ անկախ այն հանգամանքից, թե դատավարության որ կողմի համար է սահմանափակվում վերաքննության կարգով բողոքարկման իրավունքը, անհրաժեշտ է արձանագրել, որ նման սահմանափակումը պետք է կատարվի ՀՀ ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված սկզբունքներին համապատասխան:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենսգրքի հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1206-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստինե Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-057-04.10.2021-ՊԻԿ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-057-04.10.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-139-Ն վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 130-րդ հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ մասով.

3. Վարչական մարմինները տուգանքների վերաբերյալ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն բացառապես այն դեպքերում, երբ տուգանքի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը:

Հոդված 2. Օրենսգրքի 154-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով:

5. Վարչական մարմինների՝ վճռաբեկ բողոք բերելու դեպքերի վրա տարածվում են սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Նախագծի ընդունման նպատակը.

Սույն նախագծով առաջարկվում է բեռնաթափել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, ինչպես նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանը:

Հիմնավորումը պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ իրավակիրառական պրակտիկայում նույնիսկ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի պայմաններում վարչական մարմինները մեխանիկորեն ներկայացնում են վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքներ, որի պայմաններում առաջանում է ուշացած արդարադատության ծայրահեղ վտանգավոր իրավիճակ եւ ողջամիտ ժամկետներում գործերի քննության երաշխիքի խախտում: Նախագծով առաջարկվող մեխանիզմի հիմքում ընկած է նաեւ միջազգային իրավական փաստաթղթերում օգտագործվող՝ «ուշացած արդարադատությունը մերժված արդարադատություն է» ("Justice delayed is justice denied") գաղափարը, որի համաձայն՝ դատավարության չհիմնավորված ձգձգումը կարող է հանգեցնել «արդարադատության մերժմանը»՝ դատավարության կողմերի համար (նշվածի վերաբերյալ նաեւ իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱՔԴ/0016/01/14 նախադեպային որոշմամբ): Բացի այդ վերաքննության իրավունքը, երաշխիքը մարդու, այլ ոչ վարչական մարմնի անօտարելի իրավունքն է, սակայն այս նախագծով պարզապես սահմանափակվում է վարչական մարմնի, ոչ թե իրավունքի այլ գործիքակազմի իրացումը: Այս առնչությամբ հարկ է նշել, որ նախագծով կկանխվի նաեւ ոչ խոշոր չափերի տուգանքների գործերով պետության կողմից պետական միջոցների անհարկի վատնումը: մասնավորապես քիչ չեն դեպքերը, (տե՛ս օրինակ՝ ՎԴ/6542/05/20, ՎԴ5/0188/05/20, ՎԴ/3615/05/21, ՎԴ/0512/05/21, ՎԴ/7589/05/20 գործեր) երբ 10000 ՀՀ դրամի չափով գումար բռնագանձելու ենթադրվող ակնկալիքով պայմանավորված պետական մարմինները վճարում են 10000 ՀՀ դրամ պետական տուրք, դրան գումարած կատարում են աշխատանք, օգտագործում թուղթ եւ այլ ռեսուրսներ, որի պայմաններում արդեն նպատակահարմար չի դառնում պետական ռեսուրսների օգտագործումը,

առավել եւս COVID-19 համավարակի, ապա դրա ընթացքում նաեւ զուգահեռաբար պատերազմի ու դրա արդյունքներից հետո առաջացած տնտեսական ճգնաժամի պայմաններում:

Միաժամանակ, նախագծի ընդունումը բխում է ՀՀ Սահմանադրության եւ ՄԻԵԿ կոնվենցիայով մարդու եւ քաղաքացու հիմնարար իրավունքների եւ ազատությունների, արդար դատաքննության եւ իր իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքներից, որի վառ արտացոլումն է ողջամիտ ժամկետներում իր խախտված իրավունքների վերականգնումն կլինի:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ վարչական իրավահարաբերություններում բացի տույժի տեսակ հանդիսացող տուգանքները, առկա են նաեւ այլ վարչական տույժեր եւ առհասարակ այլ վարչական իրավահարաբերություններ, նախագծի հեղինակը զերծ է մնացել ցանկացած դեպքում վերաքննիչ եւ կամ վճռաբեկ բողոք բերելու արգելքի սահմանումից, քանի որ խոսքը կարող է գնալ գործողության կատարման, պարտավորեցման կամ ճանաչման հայցերի մասին, ինչի պայմաններում այսպիսի արգելքը կարող է եւ ողջամիտ չլիներ: Նախագծով նաեւ նախատեսվել է կոնկրետ դրամական-միավորային չափը, որը գերազանցելու դեպքում՝ պայմանավորված ռեսուրսների, ժամանակի եւ կատարված զանցանքի համար վրա հասնող պատասխանատվության տեսակի եւ դրա չափի է վարչական մարմինների համար առաջանում վերաքննիչ եւ կամ վճռաբեկ դատարաններ բողոք բերելու իրավասություն:

Հաշվի առնելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված տուգանքների չափերը եւ արարքների վտանգավորության չափը, որպես վերաքննիչ եւ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու համար քննարկվող տուգանքի չափ է ընտրվել 500.000 ՀՀ դրամը:

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման դեպքում.

1. Էապես ավելի արագ եւ արդյունավետ կապահովվի ողջամիտ ժամկետներում վարչական գործերի քննության կարգը,

2. Կբացառվի ուշացած արդարադատության կայացումը,

3. Հատուկ շեշտադրում կդրվի մարդու եւ քաղաքացու՝ Ներպետական եւ վերպետական օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների ր ազատությունների արդյունավետ երաշխավորման վրա,

4. Էապես կբեռնաթափվեն ՀՀ վերաքննիչ վարչական եւ վճռաբեկ դատարանները: